Կ Ա Ր Ծ Ի Ք

Է.00.01-<<Հայոց պատմություն>> մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Գայանե Խաչիկի Ղազարյանի <<Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)>> ատենախոսության վերաբերյալ

Առօրեականության պատմությունը լինելով հայ պատմագիտության նոր ձևավորվող ուղղություններից մեկը՝ բավականին բարդ է գիտական ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ դեռևս չեն հստակեցված այս գիտության ուղղության հետազոտության սահմանները և մինչ այժմ որպես առանձին ուսումնասիրության առարկա գրեթե չի ներկայացվել հայ պատմագիտության մեջ: Խնդրի ուսումնասիրությունը բարդանում է նրանով, որ չկան <<պատմական առօրեականություն>> հասկացության բոլորի կողմից ընդունված ձևակերպումները: Տվյալ խնդրի ուսումնասիրությունը հետազոտողից պահանջվում է միջառարկայական (փիլիսոփայություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, ազգագրություն, քաղաքագիտություն և այլն) համադրություններ և տարբեր գիտությունների կողմից մշակված մեթոդաբանությունների ու մեթոդների օգտագործման ունակություններ:

Ուսումնասիրության թեման իրավամբ արդիական է, քանի որ պատմության ոչ վաղ անցյալի հետազոտությունը առօրեականության տեսանկյունից կարող է օգնել հատկապես ժամանակակից քաղաքական և հասարակական կյանքում խուսափելու անցյալում թույլ տրված սխալներից, ինչը բնականաբար կնպաստի առավել կայուն ու հեռանկարային հասարակության ձևավորմանը: Հայրենադարձության թեման եղել է և մնում է հայ իրականության կարևորագույն խնդիրներից մեկը: Այն ավելի քան արդիական է մեր ժամանակների համար, առավելևս առօրեականության առումով: Այդ իմաստով, հետազոտության թեման լինելով նորույթ՝ ունի նաև կիրառական, գործնական նշանակություն: Ելնելով վերոգրյալից՝ ողջունելի է հեղինակի այս ուսումնասիրությունը, քանի որ ատենախոսության մեջ փորձ է արվել գտնել

Сканировано с CamScanner

հետազոտության հիմնախնդիրների հաղթահարման ուղիները: Դա ևս որոշակի արժեք է հաղորդում աշխատանքին:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված են հետազոտության արդիականությունը, գիտական նորույթը, ատենախոսության նպատակները, խնդիրներն ու գիտագործնական նշանակությունը, ներկայացված է թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Այստեղ հարկ ենք համարումը հեղինակի ուշադրությունը սևեռել այն, մեր կարծիքով կարևոր հանգամանքի վրա, որ ատենախոսությունում չեն օգտագործվել՝ այս թեմայի ուսումնասիրության առումով այնպիսի մեթոդաբանական մոտեցումներ ինչպիսիք են բիհևորիալիստական(վարքաբանական) և դիսկուրսային (խոսակցական և գրավոր տեքստի վերլուծություն) մոտեցումները: Նշված չեն ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Ատենախոսության առաջին գլխում <<Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների առօրյայի առանձնահատկությունները >> քննարկման առարկա է դարձել Խորհրդային Հայսատանում հետպատերազմյան տարիների հիմնական խնդիրները, բավականին ճիշտ մոտեցում է դրսևորվել, երբ առանձնացվել է քաղաքի և գյուղի բնակչության առօրյայի առանձնահատկությունները: Հասկանալի է, որ առօրեական իրականության վրա բավականին մեծ ազդեցություն ուներ իրավապահ մարմինների գործունությունը, ինչը և ներկայացված է հետազոտության մեջ: Դա և Հայ Առաքելական եկեղեցու ազդեցությունը հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, մեր կարծիքով, կարելի էր ներկայացնել որպես առաջին գլխի ենթագլուխներ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ <<Խորհրդային Հայաստանում հայրենադարձների հաստատումը և ինտեգրման խնդիրները>> հեղինակը մանրամասն քննարկում է մինչև Հայաստան գալը հայրենադարձների ընկալումներն ու պատկերացումները խորհրդային պետության և իրականության մասին: Ներկայացնում է նրանց տեղավորման գործընթացը: Առանձնահատուկ ուշադրության է արժանացնում հայրենադարձների ընդունման և տեղավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունների ու թերությունների վրա: Գիտական բարեխղճությամբ, փաստացի

Сканировано с CamScanner

տվյալներով ներկայացնում է այդ գործընթացների բացասական ազդեցությունը հանրապետության քաղաքական և հատկապես հասարակական կյանքի վրա: Հեղինակը մեծ ուշադրություն է դարձնում բյուրոկրատիզմի այնպիսի դրսևորումների վրա, ինչպիսիք են կամայականությունները, մանր հովանավորչությունը, կոպտությունը, վարչարարությունը, քմահաճությունը և այլն:

Ատենախոսության երրորդ գլխում՝ <<Խորհրդային իշխանությանը հայրենադարձների ներգրավման գործընթացը>> հեղինակը քննարկում է իր ուսումնասիրության հիմնախնդրի կարևորագույն հարցերից մեկը: Այստեղ նկատելի է, որ հեղինակն օգտագործել է այնպիսի արխիվային և այլ նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռել նրան հնարավորինս ամբողջական ներկայացնել հարցը: Բավականին լավ է ներկայացված տեղաբնակների ու հայրենադարձների հարաբերությունները, նրանց միջև եղած մտածողության, ապրելակերպի, մշակութային, լեզվական տարբերությունները: Կարծում ենք, որ տեղին է հեղինակի անդրադարձը խորհրդային տոների վրա, ինչը իրապես ազդել է հայրենադարձերի ինտեգրմանը խորհրդային իրականությանը, ինչպես նաև՝ պետական-կուսակցական և կրթամշակութային կյանքին հայրենադարձների ներգավվածությանը:

Ատենախոսության եզրակացություններում ձևակերպված հետևությունները և ընդհանրացումները փաստարկված են, աչքի են ընկնում տրամաբանական հետևողականությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Դրանք արդիական են և կարող են հանդես գալ որպես ինքուրույն մոտեցում:

Գ.Ղազարյանն առնչվելով բավականին բարդ և բազմաբովանդակ խնդրին կարողացել է կիրառել գիտահետազոտական աշխատանքներին առաջադրվող տեղեկատվություն և փաստերի վերամշակման ու ընդհանրացման սկզբունքները, ինչը վկայում է այն մասին, որ ատենախոսն անհրաժեշտ ունակություններ ունեցող մասնագետ-հետազոտող է: Աշխատանքի շարադրանքում նկատելի է նաև ատենախոսի ստեղծագործական մոտեցումը քննարկվող հարցերի նկատմամբ: Նման ուսումնասիրության համար ճիշտ մոտեցում է արխիվային նոր նյութերի և հատկապես հուշերի օգտագործումը: Առանձնապես գովելի է, որ հեղինակը օգտագործել է դաշտային

Сканировано с CamScanner

ուսումնասիրությունների (հարցազրույցներ ականատեսների կամ մասնակիցների հետ) մեթոդը:

Գ. Ղազարյանի <<Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)>> թեկնածուական ատենախոսության մեջ բացի վերոնշյալից, տեղ են գտել նաև մի շարք թերություններ, մասնավորապես.

1. Մեր կարծիքով, առաջին գլխում հեղինակը պետք է փորձեր տալ <<պատմական առօրեականություն>> հասկացության իր տարբերակը, որով կհիմնավորվեին այն խնդիրները, որոնք հետազոտվել են ատենախոսության մեջ:

2. Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մեծ տեղ հատկացներ Եվրոպայից և Մերձավոր Արևելքից ու Ասիայից հայրենադարձների բավականին էական տարբերությունների վրա, ինչն իր ազդեցությունն էր ունենում ինտեգրման գործընթացի վրա: Այդ մասին կա հիշատակում Երկրորդ գլխի առաջին ենթագլխում, ինչը, մեր կարծիքով, բավարար չէ խնդիրը ներկայացնելու համար:

3. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն հատուկ ուշադրություն դարձներ հայրենադարձների սոցիալական կազմի վրա: Կարծում ենք, որ մանր ձեռնարկատիրությանը և առևտրային գործունեությանը սովոր հայրենադարձները իրենց ունակություններն(տնային դերձակություն, կոշկակարություն, սպկուլյացիա և այլն) սկսեցին իրականացնել, ինչ մի կողմից նպաստում էր ինտեգրացմանը, յուրահատկություններ մտցնում այդ գործընթացի մեջ, մյուս կողմից բացասական ազդեցություն էր թողնում դրան անսովոր տեղացիների վրա:

4. Վերոնշածի առումով կարծում ենք, որ այնքան էլ ընդհանրական չի կարելի համարել էջ 86-ում բերված օրինակը, որտեղ նշված է, թե գյուղացու չարքաշ կյանքին հատկապես սովոր չէին մեծահարուստները: Եթե որոշակի ընդհանրացումներ կատարվեին հայրենադարձների սոցիալական կազմի մասին, ապա ակնհայտ կդառնար, որ հայրենիք եկածների մեջ բավականին քիչ տոկոս էին արտասահմանում բարեկեցիկ ապրողները, ուստի խոսել մեծահարուստների մասին տեղին չէ:

5. Հեղինակը 125-րդ էջում հղում է կատարում Գ. Ժամհարյանի հոդվածին, որտեղ նշված է, թե <<տեղացիները գրեթե ոչինչ չգիտեին հայ ժողովրդի արևմտյան հատվածի

Сканировано с CamScanner

ճակատագրի մասին...>>: Մեր կարծիքով սխալ է հեղինակի հետևությունը, թե նրանք տեղացիներին հաղորդակից դարձրեցին մոռացվող <<կորսված հայրենիքի>> գաղափարին(էջ 126): Չպետք է մոռանալ, որ ցեղասպանության տարիներին Հայաստան էին գաղթել ավելի շատ հայեր, քան բնակվում էին Հայաստանում, ապա 1920-1930-ականներին բավականին հայեր էին ներգաղթել Խորհրդային Հայաստան: 1940-ի կեսերին և հետագա տարիներին նրանցից շատերը և իրենց ժառանգները դեռ ապրում էին, ուստի չի կարելի հետևություն անել, թե 1940-ականների հայրենադարձները տեղացիներին հաղորդակից դարձրեցին կորսված հայրենիքի գաղափարին:

6. Կարծում ենք, որ աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսն անդրադառնար նաև հայրենադարձների մասնակցությանը հանրապետության սպորտային կյանքին: Կային հայտնի բասկետբոլիստներ(օրինակ՝ Արմենակ Ալաջաջյան, Դավթյան եղբայրներ և ուր.), ֆուտբոլիստներ (օրինակ՝ Հարություն Քեհյան և ուր.): Հայտնի է, որ հատկապես կոլեկտիվ սպորտաձևերը նպաստում էին ինտեգրացիոն գործընթացներին:

Այնուամենայնիվ, Գայանե Խաչիկի Ղազարյանի <<Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)>> թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու համար առաջադրվող պահանջներին և հաջող պաշտպանության դեպքում հեղինակն արժանի է Է.00.01-<<Հայոց պատմություն>> մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ս. Մանուկյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, դոցենտ Մ. Վ. Հովհաննիսյան

<<27>>. 06. 2025թ.

Сканировано с CamScanner